

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«Վայոց ձորի մարզպետի կողմից 2014թ. քաղաքացիների ընդունելության կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքների մասին համաձայն մեթոդական ուղեցույցի 20.2 ենթակետի վերաբերյալ

Մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովել է «Օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ Կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: 2014թ. մարզպետի կողմից ընդունվել են 95 որոշումներ, 144 կարգադրություններ, աշխատակազմի ղեկավարի կողմից արձակվել են հրամաններ, հրավիրվել է մարզխորհրդի 4 նիստ:

2014թ աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում մուտքագրվել են 5185 և ելք են արվել 6988 փաստաթղթեր:

Մարզպետը համագործակցված աշխատանքներ է տարել հանրապետական գործադիր իշխանության մարմինների հետ:

2014թ. ընթացքում մարզպետարանում առաջացել է քաղաքացիական ծառայության 8 թափուր պաշտոններ, որից 6-ը համալրվել են մրցույթով և արտամրցույթով, 3-ի հետ կնքվել է ժամկետային աշխատանքային պայմանագիր: ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմում ներկայումս առկա են երեք թափուր քաղաքացիական ծառայության պաշտոններ, աշխատանքներ են տարվում դրանց համալրման նպատակով:

2014թ ընթացքում արեստավորվել են 11 քաղաքացիական ծառայողներ, որից 6-ը գլխավոր պաշտոն զբաղեցնող, 1-ը առաջատար, իսկ 4-ը կրտսեր պաշտոններ զբաղեցնող անձինք են:

2014թ. հանրապետության տարբեր ԲՈՒՀ-երում մասնագիտական վերապատրաստում են անցել 16 քաղաքացիական ծառայողներ:

Մարզպետարանի աշխատակազմը մեծ ուշադրություն է դարձնում քաղաքացիների ընդունելության կազմակերպմանը և վերջիններիս կողմից ներկայացված դիմումների, բողոքների և առաջարկությունների ընդունմանը, սահմանված կարգով դրանց ուսումնասիրմանը: 2014թվականին մարզպետի մոտ 1267 քաղաքացիների ընդունելություն է կազմակերպվել:

Տարվա ընթացքում ստացվել և ՀՀ Նախագահի ու կառավարության աշխատակազմից ՀՀ Վայոց ձորի մարզպետին են վերահասցեագրվել 1343 դիմումներ, որից 56-ը ստացվել են Ջերմուկի, 380-ը Վայքի, 907-ը Եղեգնաձորի տարածաշրջանից:

2014թ ընթացքում 824 քաղաքացու դրամական օգնություն է տրամադրվել, 46 հաշմանդամներ ստացել են առողջարանային վերականգնողական ուղեգրեր, իսկ 73-ը պետպատվերի շրջանակներում ստացել են համապատասխան բուժօգնություն: Մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվել նաև քաղաքացիներին հուզող սոցիալ-տնտեսական, կենցաղային, գյուղ տեխնիկա և անասուններ ձեռք բերելու, աշխատանքային, համայնքների խնդիրներին լուծում տալու հարցերը:

Մարզպետին ուղղված 1137 դիմումներից դրական լուծում են ստացել 1081-ը, անհիմն լինելու և մեր իրավասություններից դուրս լինելու պատճառաբանությամբ մերժվել են 36-ը, 20 դիմումների լուծումը ընթացքի մեջ է:

2014թ. ՀՀ Վայոց ձորի մարզպետին են դիմել 1137 քաղաքացիներ, որից՝

1. Դրամական օգնություն	824
2. Նպաստի հարցերով	5
3. Հողային վեճեր և սահմանների ճշտում	22
4. Խմելու և ոռոգման ջրի բարելավման հարցերով	18
5. Տան և շինությունների վերականգնման և վթարայնության	9
6. Աշխատանքի տեղավորման	25
7. ՏԻ մարմիններից բողոքներ և գյուղի հիմնահարցեր	15
8. Առողջարանային ուղեգրեր տրամադրելու	46
9. Պետ.պատվերով բուժօգնություն	73
10. Որդեգրման հարցերով	2
11. Երեխաներին կրթության առանձնահատուկ պայման. մեջ ընդգրկելու	41
12. Խնամակալություն և հոգեբարձություն սահմանելու խնդրանքով	1

Աշխատակազմի քարտուղարության պետ՝

Հ. Կարապետյան